

**ՊԱՐՍԿԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

Քրիստինե Կոստիկյան
ՀՀ ԳԱԱ ԱԻ

Քանալի բառեր. *Պարսկական վավերագրեր, Էջմիածին, Մատենադարան, գրագրություն, հրովարտակ, շարիաթական նոտարական փաստաթուղթ*

Պարսկական վավերագիտության ուսումնասիրությունը Հայաստանում սկիզբ է առել դեռևս ԺԸ դարից՝ հիմնականում ելնելով այդ աղբյուրների ուսումնասիրության անհրաժեշտությունից ու կարևորությունից: Դա սկզբնապես պայմանավորված էր Հայոց Եկեղեցու իրավաքաղաքական ու սոցիալ-տնտեսական պահանջմունքներով:

Պատմական Հայաստանի արևելյան շրջանները դարեր շարունակ գտնվել է իրանական տիպի կառավարման համակարգ ունեցող մահմեդական պետությունների տիրապետության տակ, որտեղ պարսկերենն էր պաշտոնական գրագրության լեզուն (այդպիսին էին Սելջուկյան, Իլխանական, Կարա Կոյունլու, Ալ Կոյունլու, Սեֆյան և Ղաջարական պետությունները): Նաև հայ բնակչության հոծ խմբեր բռնագաղթերի ենթարկվելով դեպի Իրանի ներքին նահանգներ՝ հարկադրաբար առնչվել են օտար տիրապետողների աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հետ, հարմարվել նրանց սահմանած օրենքներին: Հայոց պետականության անկումից հետո եկեղեցական առաջնորդները հանդիսացել են օտար իշխանությունների և Հայոց Եկեղեցու ու նրան հպատակ հայության փոխհարաբերությունները կարգավորող միջնորդ օղակ՝ կարևոր դեր խաղալով վերջիններիս իրավունքների պաշտպանության հարցում: Իսկ այդ իրավունքների սահմանումն ու պաշտպանությունը իրականացվել է իշխանություններից և շարիաթական դատարաններից ձեռք բերված հրամանագրերի ու շարիաթական-նոտարական փաստաթղթերի միջոցով: Հետևաբար, զարմանալի չէ պարսկերեն փաստաթղթերի առատությունը Էջմիածնի և հայոց վանքերի արխիվային հավաքածուներում: Պարսկերեն փաստաթղթերի մի խումբ էլ պատկանել է հայ աշխարհիկ վերնախավին՝ մելիքական ու վանառականա-

կան ընտանիքներին, որոնց մի մասը ևս տարբեր ուղիներով հայտնվել է Մատենադարանի արխիվային հավաքածոյի մեջ:

Էջմիածնի պարսկերեն փաստաթղթերի առաջին ուսումնասիրողներից էր Սիմեոն Երևանցին (Ամենայն հայոց կաթողիկոս 1763-1780 թթ.), որը դրանք ընթերցել և օգտագործել էր, նախ և առաջ, ելնելով Մայր Աթոռի շահերից: Ժամանակաշրջանի աղբյուրները հավաստում են հայությանը խանական իշխանության անօրինականություններից պաշտպանելու ուղղությամբ Սիմեոն Երևանցու ձեռնարկած քայլերի մասին¹: Վերջինիս դերը բացառիկ էր հատկապես Էջմիածնի սոցիալ-տնտեսական ու իրավական դրությունը անհրաժեշտ փաստաթղթերով ապահովելու հարցում: Գիտակցելով պարսկերեն կալվածագրերի ու հրովարտակների կարևորությունը և հենվելով դրանց վրա՝ Սիմեոն Երևանցին կարողանում է վերադարձնել Էջմիածնի որոշ հողային կալվածքներ ու ջրային ռեսուրսներ, ամրապնդել նրանց պատկանելությունը Մայր Աթոռին Երևանի Հուսեյն Ալի խանի, շեյխ-ուլ-խալամի և այլ պաշտոնյաների կողմից ստորագրված ու կնքված փաստաթղթերով²: Հայոց հովվապետին հաջողվում է նաև հատուկ հրովարտակներով ազատել Էջմիածինը Երևանի խանին վճարվող ծանր հարկերից³:

Իր ձեռքի տակ եղած վավերագրական նյութերի տվյալների հիման վրա Սիմեոն Երևանցին գրում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Երևանի խանության հայոց վանքերի կալվածատիրության ու հարկային իմունիտետի պատմությանը նվիրված “Ջամբո” աշխատությունը: Այս աշխատության 20-ից 25-րդ գլուխներն ամբողջովին նվիրված են Էջմիածնի հավաքածուի պարսկերեն ու օսմաներեն վավերագրերի հակիրճ բովանդակության ներկայացմանը⁴: Մատենադարանի պարսկերեն վավերագրերից շատերն իրենց հակառակ կողմում կրում են նրա ցուցումներով կամ անձամբ նրա կողմից արված գրառումները նրանց բովանդակության վերաբերյալ: Բարձր գնահատելով այդ օտարալեզու փաստաթղթերը՝ Սիմեոն Երևանցին իր աշխատության մեջ նշում էր. «Արդ՝ քանի որ շատ (նյութեր ու փաստաթղթեր) չգտնվեցին, ինչպես

¹ Хыдов 1811, էջ 3-4:

² Սիմեոն Երևանցի 2003, էջ 51-52:

³ Նույն տեղում, էջ 206, 208:

⁴ Նույն տեղում, էջ 292-378:

ասացի, դրա համար էլ այս քչով, որ ձեռքիս տակ ունեցա, տեսա եւ վերահասու եղա նրանց մտածումներին եւ դիտավորություններին, եւ այստեղ (դրանք) գրի առա, որպեսզի դրանք ևս չկորչեն: Քանզի թեւ տվողներն այլազգիներ են եւ մեր կրոնին թշնամի, սակայն նրանց տվածներն ու հրամանագրերը մեր այս երկրի համար օգուտ տվող են, (ցավեր) բուժող եւ ապահովություն (բերող)... Մա նրա համար եմ երկար ասում, որպեսզի դու եւս զգուշությամբ պահես քեզ մոտ այն մնացածները, որ դու ունես: Եվ չասես, թե այժմ այսինչ հրովարտակը պիտանի չէ, այլեւ եթե թագավորները չկան, ինչի են պետք նրանց հրամանները, որովհետև կարող են պիտանի լինել շատ անգամ ...Եվ հատկապես այն, որ ինչքան թագավորական թուղթ գրոնվելիս լինի (Մուրբ) Աթոռում, այնքան պատվաբեր է նրա համար...»⁵:

Սիմեոն Երևանցու «Ջամբռը» երկար տարիներ միջնորդ աղբյուր է հանդիսացել հետագա հետազոտողների համար, որոնք զբաղվել են Երևանի նահանգի ու Մայր Աթոռի պատմության զանազան հարցերի ուսումնասիրությամբ:

ԺԹ դարում պարսկալեզու վավերագրեր իրենց աշխատություններում ընդգրկել ու նրանց հաղորդումներից օգտվել են Ս. Ջալալյանը, Մ. Սմբատյանը, Բաֆֆին, Կ. Տեր-Մկրտչյանը և ուրիշներ: Մասնավորապես Ս. Ջալալյանը իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատության վերջում թարգմանաբար տպագրել է Աղվանից կաթողիկոսությանը վերաբերող 14 պարսկերեն հրովարտակ⁶ մտավախություն ունենալով, որ հետագայում դրանք հնարավոր է, որ կորեն, ինչպես, որ արդեն մեկ անգամ պատահել էր նրա ճանապարհորդության ընթացքում⁷: Այնուամենայնիվ այդ վավերագրերը կամ նրանց պատճենները պահպանվել են Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում և վերահրատարակվել են Մատենադարանի պարսկերեն հրովարտակների մատենաշարում⁸:

Մ. Սմբատյանը Շամախու թեմի նկարագրությանը նվիրված իր աշխատության մեջ թարգմանաբար ներկայացնում է շահ

⁵ Սիմեոն Երևանցի 2003, էջ 292:

⁶ Ջալալեանց 1858, էջ 480-498:

⁷ Նույն տեղում, էջ 480:

⁸ Փափազյան 1956, վավ. 3, Փափազյան 1959, վավ. 5, 23, Կոստիկյան 2005ա, վավ. 1, 14, 43, ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ վավ. 210:

Արքաւ Բ-ի (1632-1666 թթ.) հիշրայի 1062թ. (1651/2 թ.) հրովարտակը՝ հրապարակված ի հաստատումն Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի կաթողիկոսական իրավունքների⁹: Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել է այդ վավերագրի միայն պատճենը, որը որոշ անճշտություններ ունի Սմբատյանցի ձեռքի տակ եղած բնագրի համեմատությամբ¹⁰: Մերովր արքեպիսկոպոս Սմբատյանը ծանոթ է եղել նաև Դավիթ Մելիք-Շահնազարյանի Գեղարքունիքում ունեցած կավածքների ժառանգական իրավունքի կապակցությամբ ռուսական իշխանության տարիներին հարուցված գործին կցված փաստաթղթերին, որոնց մի մասը թարգմանաբար ներկայացրել է իր մյուս՝ Գեղարքունիքի տեղագրությանը նվիրված աշխատության մեջ¹¹: Հարկ է նշել, որ Մերովր Արքեպիսկոպոս Սմբատյանցն անձամբ չի ընթերցել այդ վավերագրերը, այլ ծանոթացել ու իր աշխատանքներում դրանք ընդգրկել է միջնորդավորված կերպով: Գանձասարի կաթողիկոսի իրավունքները հաստատող վավերագիրը նա վերցրել է Ս. Ջալալյանցի աշխատությունից¹², իսկ Գեղարքունիքի վավերագրերին, ինչպես հեղինակն ինքն է նշում, ծանոթացել է Եփրեմ կաթողիկոսի դիվանից սարկավագ Հովսեփ Արուեանց Տփիսիսեցու միջոցով¹³: Ինչպես ցույց է տալիս Մ. Սմբատյանցի և Մատենադարանում պահվող Մելիք-Շահնազարյանների արխիվի փաստաթղթերի համեմատությունը, դրանց թարգմանությունները հիմնականում ճիշտ են ներկայացնում նրանց բովանդակությունը¹⁴: Մ. Սմբատյանցի աշխատությունից էլ օգտվել է Կարապետ Տեր-Մկրտչյանը¹⁵ Դոփեան և Մելիք Շահնազարյան տոհմի պատմությանը նվիրված իր աշխատությունը գրելիս:

Արցախի պատմությանը վերաբերող պարսկերեն վավերագրերի թարգմանությունների մի հավաքածու է կազմած եղել Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանը, որի նմուշներից օգտվել ու դրանցից մի քանիսը ծանոթագրություններում տպա-

⁹ **Սմբատեանց 1896**, էջ 225:

¹⁰ Համեմատի՛ր **Կոստիկյան 2005ա**, վավ. 1:

¹¹ **Սմբատեանց 1895**, էջ 781-808:

¹² Համեմատի՛ր **Ջալալյան 1858**, էջ 488-9:

¹³ **Սմբատեանց 1895**, էջ 781:

¹⁴ Համեմատի՛ր **Կոստիկյան 2005բ**, էջ 310-322:

¹⁵ **Տեր-Մկրտչեան 1914**, էջ 145-146:

գրել է Գրիգոր Տեր Հովհաննիսյանը նրա կենսագրությանը նվիրված իր հետազոտության մեջ¹⁶:

Բաֆֆին ևս, ինչպես ինքն է նշում իր «Խամսայի մելիքությունները» աշխատության վերջաբանում, այն գրելիս օգտվել է «Բաղդասար միտրոպոլիտի հրովարտակաների, ֆիրմանների, կալվածագրերի, արձանագրությունների ու զանազան պաշտոնական թղթերի հավաքածոյից», որոնք նա գտել էր Շուշիում¹⁷:

Հայ նշանավոր լեզվաբան ու արևելագետ Հ. Աճառյանը բնագրով և թարգմանաբար (ձեռագրից արտատպված 40 օրինակով) հրատարակել է Ղարաբաղի պատմությանը վերաբերող Մոսկվայի Արտաքին գործերի նախարարության արխիվում Աշոտ Հովհաննիսյանի հայտնաբերած ու պատճենած 6 պարսկերեն և 1 օսմաներեն վավերագիր¹⁸:

Մատենադարանի մի քանի պարսկերեն վավերագրերից օգտվել է Ի.Պ. Պետրուշևսկին և Հայաստանի ու Ադրբեջանի ԺԶ-ԺԹ դարերի ագրարային հարաբերությունների նվիրված իր հետազոտության հավելվածում կարճ հատվածներ ներկայացրել մի քանի վավերագրերից¹⁹:

Հայ իրանագետներից այս ոլորտում հիմնարար աշխատանք է կատարել Հ. Դ. Փափազյանը: Երկար տարիներ աշխատելով Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ նա ձեռնամուխ է լինում այնտեղ պահվող արաբատառ վավերագրերի ուսումնասիրման ու հրատարակման գործին:

Հ. Փափազյանի աշխատանքի արգասիքն են պարսկերեն, օսմաներեն և արաբերեն աղբյուրների, հատկապես վավերագրերի վրա հիմնված գիտական հետազոտությունները հայոց պատմության ու իրանագիտական տարաբնույթ հարցերի շուրջ²⁰, ինչպես նաև պարսից վավերագրերի եռալեզու (հայերեն, ռուսերեն, պարսկերեն) գիտական հրատարակությունը՝ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերի» երեք պրակներով: Այս շարքի առաջին պրակի կազմության ընթացքում մշակվում են պարսկերեն վավերագրերի ուսումնասիրության և հրատարակության այն հիմնական սկզբունքներն ու աշխատանքի մեթոդ-

¹⁶ **Տեր Հովհաննիսյան 1880**, էջ 145:

¹⁷ **Բաֆֆի 1964**, էջ 367:

¹⁸ **Աճառյան 1927**:

¹⁹ **Петрушевский 1949**, էջ 8-10, 360-364:

²⁰ **Փափազյան 1973**:

ները, որոնք այնուհետև ևս կիրառվում են հետագա պրակների վրա աշխատելիս: Խորհրդային Միության ժամանակաշրջանում գիտական հրատարակությունները ուղղորդվում էին ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի կողմից: Նույն ակադեմիայի Պատմության ինստիտուտի նախաձեռնությամբ 1954 թ. մշակվել էր վավերագրերի հրատարակության կանոնների նախագիծ, որն էլ ըստ երևույթին ուղեցույց էր հանդիսացել Հ. Փափազյանի կողմից Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքի հրատարակման պատրաստելու համար²¹:

Պարսկերեն վավերագրերի ուսումնասիրության մեթոդիկան մշակելիս Հ. Փափազյանը հաշվի էր առել և օգտագործել Խորհրդային արևելագետների կողմից պարսկերեն վավերագրերի հրատարակության արդեն առկա փորձը և մեթոդները: Մասնավորապես, դեռ 1936 և 1937 թթ. հրատարակվել էին Յուրի Ն. Մառի խմբագրությամբ և նրա հիշատակին նվիրված Նախիջևանի և Ղուբայի խաների պարսկերեն վավերագրերի ժողովածուները: Այդ ժողովածուներից առաջինում, որ հրատարակվել էր Կ. Սմիրնովի և Ջ. Գաիրովի աշխատասիրությամբ²², 24 պարսկերեն վավերագրերը ներկայացվում էին հետևյալ կերպ. նախ ֆոտոպատճեններ էր, ապա պարսկերեն տեքստը, այնուհետև բովանդակության ռուսերեն մեկնաբանությունը և թարգմանությունը: Մյուս ժողովածուի մեջ, որ հրատարակվել էր Ֆ. Ռոստոպչինի թարգմանությամբ, բացակայում էին ներկայացվող 29 պարսկերեն վավերագրերի ֆոտոպատճենները և մեկնաբանությունները, բայց առկա էր տերմինաբանական բառարան, որը չկար նախորդ ժողովածուի մեջ²³:

Հ. Փափազյանը քաջաձանոթ էր նաև Մ. Խուբայի և Վ. Փութուրիձեի աշխատասիրությամբ 1949 և 1955 թթ. հրատարակված պարսկերեն վավերագրերի ժողովածուներին, որոնցից վերջինը նրա գնահատմամբ «կարևոր ավանդ էր պարսկերեն արխիվային վավերագրերի ուսումնասիրության և հրատարակության գործում»²⁴: Նույն ժամանակահատվածում Խորհրդային վավերագիտությունը որոշակի քայլեր էր կատարել նաև Միջին Ասիայի հանրապետությունների պարսկերեն և օսմաներեն

²¹ Փափազյան 1959, 72:

²² Смирнов, Гайбов 1936:

²³ Ростопчин 1937:

²⁴ Փափազյան 1956, 18:

արխիվային հավաքածուների նմուշների ուսումնասիրության ուղղությամբ: 1950-ականներին արդեն տպագրվել էին Պ. Իվանովի և Օ. Չեխովիչի աշխատասիրությամբ այդ հավաքածուներից բազմաթիվ կավածագրեր և այլ շարիաթական նոտարական փաստաթղթեր²⁵:

Պարսկերեն փաստաթղթերի ուսումնասիրության և ներկայացման Հ. Փափազյանի որդեգրած սկզբունքները ներառում են դրանց ձեռագրագիտական նկարագրությունը, բովանդակային տվյալների համակողմանի աղբյուրագիտական քննությունը և ներկայացումը ժամանակաշրջանի իրողությունների համատեքստում: Ձեռագրագիտական նկարագրությունը բովանդակում է տեղեկություններ արխիվային գրանցման, բնագրային հատկանիշների (բնագիր, թե պատճեն), չափսերի, գրչության վերաբերյալ, որոնք հաջորդում են յուրաքանչյուր փաստաթղթի հերթական համարի տակ տրված անոտացիային: Լրացուցիչ տվյալները վավերագրի պատմության, եթե պատճեն է, դրա կազմության ժամանակի և նոտարական լինելու կամ չլինելու, վիճակի և նորոգման, վավերագրերի ձեռքբերման հետ կապված անձանց ու իրադարձությունների, հայերեն գրությունների և այլ կարևոր մանրամասների վերաբերյալ գետեղված են յուրաքանչյուր վավերագրին հատկացված առանձին ծանոթագրության մեջ:

Հարկ է նշել, որ Հ. Փափազյանի կողմից յուրաքանչյուր փաստաթուղթ ենթարկվել է մանրակրկիտ ձեռագրագիտական և աղբյուրագիտական հետազոտության՝ պարզելու համար դրանց հրապարակման հանգամանքները և պատմահամեմատական վերլուծությամբ արժևորելու համար փաստաթղթի հաղորդումները:

Մատենադարանի պարսկերեն հրովարտակաների առաջին պրակը լույս է ընծայվել 1956թ. և ընդգրկում է 1449-1594 թթ. 23 հրովարտակ: Պրակի առաջաբանում արժևորվում են ներկայացվող վավերագրերը որպես տվյալ ժամանակաշրջանի Իրանի ու Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության սկզբնաղբյուրներ, պարզաբանվում են դրանցում կիրառվող տերմինոլոգիայի, տեղանունների և եկեղեցական անունների, դրանց հայերեն տառադարձման առանձնահատկությունները:

²⁵ **Иванов 1954, Чехович 1954.**

Փաստաթղթերի բնագրերը թարգմանված են հայերեն ու ռուսերեն, ընդ որում Հ. Փափազյանը ջանացել է հնարավորինս «հարազատ մնալ բնագրին» և «պահպանել արտահայտչական այնպիսի առանձնահատկություններ, որոնք հատուկ են այդ կարգի վավերագրերին, արտահայտում են ժամանակի ոգին և բնորոշ են դիվանական գրագրության ոճին»²⁶:

Պարսկերեն փաստաթղթերի ուսումնասիրության և ներկայացման նույն սկզբունքներն ու մեթոդիկան է կիրառում Հ. Փափազյանը այդ շարքի հերթական հաջորդ պրակներում:

Ժամանակագրորեն շարունակելով հրովարտականների շարքը, նա երկրորդ պրակում ուսումնասիրում և հրատարակում է հետագա՝ 1601-1650 թվականների Սեֆյան շահերի ու տեղական կառավարիչների 43 հրովարտակ: Գրքի առաջաբանում հեղինակը լայն աղբյուրագիտական հենքի վրա ընդարձակ անդրադարձ է կատարում ԺԷ դարի Արևելյան Հայաստանի պատմությանը, առանձնապես կանգ առնելով պրակում ընդգրկված վավերագրերի հետ կապվող պատմական իրադարձությունների և իրողությունների վրա²⁷: Չնայած խորհրդային շրջանում կրոնական հաստատությունների նկատմամբ գիտնականներին պարտադրվող կողմնակալ վերաբերմունքին և աթեիստական մոտեցմանը՝ Փափազյանին հաջողվել է քննադատաբար, սակայն առողջ մոտեցմամբ լուսաբանել ներկայացվող հրովարտականների հետ կապվող և Հայոց եկեղեցուն վերաբերող կարևոր հարցերը, պարզաբանել պատմական փաստերն ու տեղեկությունները: Համակողմանի ուսումնասիրվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու Աղվանից կաթողիկոսությունների, Տաթևի, Ագուլիսի Ս. Թովմա Առաքյալի և Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքերի հողատիրության զանազան հարցեր:

1968 թ. Հ. Փափազյանի ջանքերով Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքի հերթական պրակում հրատարակվում են 1305-1592թ. 27 կալվածագիր²⁸: Այս պրակի կառուցվածքը մի փոքր տարբերվում է նախորդ պրակներից միայն նրանով, որ պարսկերեն վավերագրերի ֆոտոպատճենները դրված են հաջորդաբար գրքի վերջում և ոչ պարսկերեն բնագրերի կողքին: Սակայն վավերագրերի ուսումնասիրման ու ներկայացման

²⁶ Փափազյան 1956, 38:

²⁷ Փափազյան 1959, 7-70:

²⁸ Փափազյան 1968:

սկզբունքները անփոփոխ են, իսկ ընդարձակ առաջաքանում վավերագրերի պատմագիտական արժեքի և աղբյուրագիտական քննությունից բացի զգալի տեղ է հատկացված դրանց որպես դիվանական գրագրության նմուշների լեզվաոճական և կառուցվածքային առանձնահատկությունների պարզաբանմանը:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի շարքի պրակներն ունեն տերմինների բառարաններ, որոնցում մասնագիտական բարձր մակարդակով բացատրվում է դրանց իմաստն ու գործառական նշանակությունը:

Հ. Փափագյանի աշխատասիրությամբ հրատարակված պրակներում ընդգրկված վավերագրերը հարուստ պատմական տեղեկություններ դրեցին գիտական շրջանառության մեջ՝ նպաստելով հայագիտության ու իրանագիտության զարգացմանը և գիտության այդ ոլորտներում այլևայլ հարցերի բազմակողմանի խորքային քննությանը: Փափագյանը հաճախ ինքն է վերլուծում այդ վավերագրերի տարաբնույթ տվյալները հողվածներում²⁹ և Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ³⁰, հաճախ առաջին անգամ և առավել հիմնավոր կերպով անդրադառնալով հայ ժողովրդի պատմության այնպիսի հարցերի, ինչպիսիք էին հայ ազնվականության ունեցրելումը բեյթ ուլ-մալի հաստատության միջոցով, հայության նկատմամբ Սեֆյան Իրանի վարած ձուլման քաղաքականությունը և այլն:

Հիշյալ պրակների հրատարակումը ծանրակշիռ ներդրում էր պարսկերեն վավերագիտության զարգացման գործում: Այն ոչ միայն ուսումնասիրողների համար մատչելի էր դարձնում հիշյալ փաստաթղթերը և ցույց տալիս դրանց կարևորությունն ու պատմական նշանակությունը, այլև պրակներում ներկայացված բնագրային ընթերցման հարուստ փորձը ուղեցույց հանդիսացավ այդ բնագավառում ոչ միայն Հայաստանի, այլև արտերկրի շատ ուսումնասիրողների համար:

Փափագյանի ուսումնասիրությունները այս բնագավառում լայն արձագանք գտան արտերկրում ու որոշակի խթան հանդիսացան իրանագիտության այս ճյուղի զարգացման համար:

²⁹ Հ. Փափագյանի հողվածների բարձր գիտական արժեքն ու հիմնարար նշանակությունը հաշվի առնելով՝ 2020 թ. դրանք վերահրատարակվեցին երկհատորյա ժողովածուի մեջ (տե՛ս **Փափագյան 2020**):

³⁰ **Папазян 1972.**

Մատենադարանի առաջին տնօրեն Լ. Խաչիկյանի հավաստմամբ, Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հատորների հրատարակությամբ Հ. Դ. Փափազյանը «համընդհանուր ճանաչում գտավ որպես հմուտ մասնագետ. նրա աշխատանքը բարձր գնահատանքի արժանացավ նշանավոր արևելագետներ Վ. Մինորսկու, Ռ. Ռոմերի, Հ. Բուսեի, Ժ. Օբենի, Չայոնցկովսկու և ուրիշների կողմից»³¹:

Հիրավի, Փափազյանի հրատարակած վերոհիշյալ պրակները լայնորեն օգտագործված ու հղված են եվրոպացի ու իրանցի հետազա շրջանի հեղինակներ Հ. Բուսեի³², Ֆեկետեի³³, Ջ. Դայեմմադամի³⁴ կողմից, որոնք իրենց հերթին կազմելով վավերագրերի ժողովածուներ և պարսկերեն վավերագրագիտությանը վերաբերող ուսումնական ձեռնարկներ՝ զարգացրեցին պարսկական աղբյուրագիտության այս ճյուղը:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալների լայն ընդգրկմամբ է իրականացրել Հ. Փափազյանը իր հիմնարար հետազոտությունը՝ նվիրված Արևելյան Հայաստանի ԺԶ-ԺԷ դարերի հողային հարաբերություններին³⁵:

Որպես այս բնագավառում առավել հմուտ մասնագետ, հայ արևելագետը խմբագրել է Վրաստանի արխիվների պարսկերեն հրովարտակաների ժողովածուները, որի առաջաբանում բարձր է գնահատված նրա ներդրումն այդ ժողովածուի արժանի գիտական մակարդակով հրատարակության պատրաստելու գործում³⁶:

Հ. Փափազյանի հետազոտությունները հանդիսացել են նաև պարսկերեն վավերագրերի բնագավառում մեր աշխատանքի ուղեցույցը՝ մշտապես առաջնորդելով հետազա շրջանի վավերագրերի ուսումնասիրության հարցում: Մատենադարանի պարսկերեն հրովարտակաների հաջորդ երեք պրակներում՝ հայերեն ու անգլերեն թարգմանություններով և գիտական մեկնաբանություններով հրատարակվեցին ԺԷ դարի երկրորդ կեսից մինչև 1829 թ. ընկած ժամանակահատվածի 241 պարսկերեն

³¹ Խաչիկյան 1980, էջ 10:

³² Busse 1959, էջ 4, 5, 227:

³³ Fekete 1977. էջ 565:

³⁴ 136, 90, 84, 425. ص. قاييم مقامی 1350:

³⁵ Папазян 1972, էջ 302:

³⁶ Тбилисская коллекция персидских фирманов, 1995, էջ 9, 1989, էջ 8:

հրովարտականները³⁷: Ի լրումն այս շարքի արարագետ Մովսես Խեչոյի հետ համահեղինակությամբ 2018 թ. հրատարակվեց “Մատենադարանի պարսկերեն վավերագրերի” հերթական 3-րդ հատորը, որում հայերեն թարգմանությամբ, գիտական մեկնաբանություններով ներկայացվեցին Մատենադարանի ԺԷ-ԺԸ դարերի 24 շարիաթական նոտարական վավերագրեր: Այս հատորի ընդարձակ առաջաբանում փորձ է արվում ընդհանրացնել գիտելիքները պարսկական շարիաթական նոտարական վավերագրերի տեսակների, դրանց կազմության սկզբունքների, կառուցվածքային ու լեզվաճանաչական առանձնահատկությունների մասին, նաև քննել դրանցում հայկական տեղանունների ներկայացման ձևերը և կրած փոփոխությունների պատճառները³⁸:

Մատենադարանի պարսկերեն հրովարտականների շարքից դուրս են մնացել այն հրովարտականները, որոնք ավելի ուշ են ստացվել կամ հայտնաբերվել, քան ժամանակագրորեն հերթական պրակն էր պատրաստվում: Մասնավորապես, ուշ ստացված լինելու պատճառով առանձին հոդվածով են հրատարակվել Մատենադարանի պարսկերեն ամենահին, իլխանական հրովարտականները, որոնք նաև աշխարհի հնագույն պարսկերեն վավերագրերից են՝ հրապարակված լինելով 1330 թ.³⁹: Ավելի ուշ էր ստացվել նաև Մելիք-Շահնագարյանների ֆոնդը, որի վաղ շրջանի վավերագրերը դուրս էին մնացել Հ. Փափագյանի հրատարակած հատորներից: 2014 թ. հայտնի է դառնում, որ Մատենադարանի կաթողիկոսական դիվանի 1Է և 1ը թղթապանակներում պահվող 755 պարսկերեն վավերագրեր երբևէ ուսումնասիրված ու նկարագրված չեն եղել արխիվային ցուցակներում: Ուստի դրանց մեջ պահվող Սեֆյան ու Աֆշարական դինաստիայի շահերի մի քանի հրովարտականներ ևս դուրս են մնացել նշված շարքից⁴⁰:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները ընկած են նաև Վահագն Հակոբյանի Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության հարցերի ուսումնասիրությանը նվիրված աշխատության հիմքում: Աշխատության մեջ խանական հրովարտականների ու նամականու տվյալների ներ-

³⁷ **Կոստիկյան 2005, 2008, 2021:**

³⁸ **Կոստիկյան, Խեչո 2018:**

³⁹ **Փափագյան 1962**, էջ 379-401:

⁴⁰ Տես այդ վավերագրերը **Կոստիկյան, Գևորգյան 2018:**

գրավմամբ նորովի հետազոտվել է Երևանի խանության տվյալ ժամանակաշրջանի վարչաքաղաքական կառուցվածքի, հարևան խանությունների, Վրաստանի թագավորության, իրանական, օսմանյան և ռուսական իշխանությունների հետ փոխհարաբերությունների տարաբնույթ հարցերը⁴¹: Այնուամենայնիվ այս վավերագրերի բնագրերի ամբողջական հրատարակությունը դեռ չկա: Նման հետազոտությունը ևս կարող է բացահայտել բազմաթիվ նոր մանրամասներ, նամանավանդ որ վերոհիշյալ ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել են միայն Երևանի խանությանը վերաբերող վավերագրերը, իսկ հարևան Ղարաբաղի ու Նախիջևանի խանությունների ԺԸ-ԺԹ դարերի պատմությանն առնչվող նյութերը հիմնականում դեռևս չեն ուսումնասիրվել: Մատենադարանի կաթողիկոսական դիվանի պարսկերեն վավերագրերի մի ստվար խումբ վերաբերում է Ազուլիսի հայ վաճառականներին, որոնք ԺԸ-ԺԹ դարերում այդ քաղաքից հեռանալիս իրենց անշարժ գույքը հանձնում են Ս. Թովմա Առաքյալի վանքին: Վերջին ժամանակներս որոշ աշխատանք է տարվել այդ վավերագրերի ուսումնասիրության ուղղությամբ, սակայն այս վավերագրերի մեծ մասը ևս դեռևս լիովին հետազոտված ու հրատարակված չէ⁴²:

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում պահվող պարսկերեն վավերագրերը ևս մեծ կարևորություն ունեն հայոց պատմության ուսումնասիրության տեսանկյունից: Այնտեղի պարսկերեն վավերագրերից լայնորեն օգտվել է Հ. Տեր-Հովհաննեսը իր Նոր Ջուղայի պատմությունը շարադրելիս, ինչպես նաև այդ աշխատության մեջ թարգմանաբար ներկայացրել դրանցից մի քանիսը⁴³: Այդ հավաքածուի փաստաթղթերից օգտվել է նաև Վ. Ղուկասյանը ջուղահայ համայնքին նվիրված իր հետազոտությունը գրելիս, իսկ որպես հավելված գրքի վերջում անգլերեն լեզվով թարգմանաբար ներկայացրել դրանցից 12-ը⁴⁴: Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի վավերագրերից երեքի՝ Սեֆյան շահ Թահմասպ Ա-ի և Սեֆի Ա-ի վաճառականների գանձվող հարկերին վերաբերող հրովարտականքների պարսկերեն

⁴¹ Հակոբյան 2021:

⁴² Կոստիկյան 2020, Margaryan, Kostikyan, Tovmasyan 2021:

⁴³ Տեր-Յովհաննեսն 1880, էջ 36-39, 48, 52 և այլն:

⁴⁴ Ghougassian 1998, էջ 201-290

բնագրերը պատճեններով ներկայացրել է Վ. Փափազյանը⁴⁵: Վերջին ժամանակներս Նոր Ջուղայի այս թանգարանի Սեֆյան հրովարտակաների բնագրերը ուսումնասիրվել և ընդարձակ առաջաքանով հրատարակվել են իրանցի հետազոտող Հաշեմի Շուքուի ալ-Սադաթի կողմից⁴⁶: Առանձին հոդվածում ուսումնասիրվել և հայերեն թարգմանությամբ մատչելի են նաև Նադիր շահի հրովարտակաները, որոնք պահվում են Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում⁴⁷:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը որպես հայոց պատմության սկզբնաղբյուրներ, մշտապես գտնվել են հայագետների ուշադրության կենտրոնում և օգտագործվել հայոց պատմության տարբեր հարցերի քննության ժամանակ: Ընդ որում առավել մեծ ուշադրության են արժանացել հրովարտակաները: Չնայած այս ոլորտում կատարված զգալի աշխատանքին, կան նաև մեծաթիվ պարսկերեն վավերագրեր, մասնավորապես շարիաթական-նոտարական փաստաթղթեր ու պաշտոնական նամակներ թե Մատենադարանում և թե Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում, որոնք հետազոտված ու հրատարակված չեն և դրանց ուսումնասիրությունը բազում օգտակար փաստեր ու իրողություններ ի հայտ կբերի հայագիտության մեջ:

THE STUDIES ON PERSIAN DOCUMENTS IN ARMENIA AND THE PROSPECTS OF ITS DEVELOPMENT

Kristine Kostikyan

SUMMARY

Persian source studies, especially the study of Persian historical documents, have long established traditions in Armenia. It is strongly connected with the importance of these documents in protection of the rights of the Armenian Church and its subjects under the rule of the foreign powers, using Persian as official language. The start of the studies of Persian documents in Armenia may be considered the second half of 18th century and was connected with the activities of Catholicos Simeon Yerevanc'i. The author examines the valuable

⁴⁵ Փափազյան 1990, 172-177:

⁴⁶ هاشمی 1394.

⁴⁷ Կոստիկյան 2016, էջ 273-215:

contribution of some specialists in this field and focuses on the achievements of H. Papazian. The article considers the methods of work and main principles of publication of Persian documents in Soviet Union, which were the basis also for Papazian's work. The author draws also some aspects for future developments in this field.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աճառյան 1927 - Աճառյան Հ., Վավերագրեր հայ-պարսկական յարաբերությանց մասին, Երևան, (Ձեռագրի իրավունքով՝ 40 օրինակ):

Խաչիկյան 1980 - Խաչիկյան Լ., Վաստակաշատ արևելագետը, Սովետական Հայաստան, 3, էջ 10-13:

Կոստիկյան 2005ա - Կոստիկյան Բ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակաները, պրակ Գ, Երևան, “Զանգակ -97” հրատ.:

Կոստիկյան 2005բ - Կոստիկյան Բ., Գեղարքունիքի Մելիք-Շահնագարյանների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXIV, Երևան, էջ 310-322:

Կոստիկյան 2008 - Կոստիկյան Բ., Մատենադարանի պարսկերեն հրովարտակաները, պրակ Դ, Երևան, “Նաիրի” հրատ.:

Կոստիկյան 2011 - Կոստիկյան Բ., Իրանի պալատական պատմագիր Սարավին Աղա Մուհամմադ Խանի 1795թ. Ղարաբաղյան արշավանքի մասին, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXVIII, Երևան, էջ 336-349:

Կոստիկյան 2016բ - Կոստիկյան Բ., Նոր Զուղան Իրանի Նադիր շահի իշխանության շրջանում, Հանդես ամսորեայ, Վիեննա-Երևան, թիվ 1-12, էջ 273-215:

Կոստիկյան, Գևորգյան 2018 – Կոստիկյան Բ., Գևորգյան Հ., Մեֆյան շահերի նորահայտ հրովարտակաները Մատենադարանի կաթողիկոսական դիվանում, «Բանբեր Մատենադարանի», 26, էջ 58-75:

Կոստիկյան, Խեչո 2018 - Կոստիկյան Բ., Խեչո Մ., Մատենադարանի պարսկերեն շարիաթական նոտարական փաստաթղթերը (ԺԷ-ԺԸ դարեր), Երևան, ՀՀ ԳԱԱ “Գիտություն” հրատ.:

Կոստիկյան 2020 – Կոստիկյան Բ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը Ազուլիսի 17-րդ դարի հայ վաճառական-

ների մասին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ” հ. XXXIII, պրակ I, Երևան, 2020, էջ 488-516:

Կոստիկյան 2021 - Կոստիկյան Ք., Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ Ե, Երևան, Մատենադարանի հրատ.:

Հակոբյան 2021 - Հակոբյան Վ. Երևանի խանության ԺԸ. դարի երկրորդ կեսի պատմության հարցերն ըստ Մատենադարանի պարսկերեն վավերագրական նյութերի, Երևան, Մատենադարանի հրատ.:

Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ վավ. 210:

Ջալալեանց 1858 - Մարգիս Ջալալեանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մասն Բ, Տփլիս, տպ. Ներսիսեան Հոգևոր Հայոց Ճեմարանի:

Սիմեոն Երևանցի 2003, Ջամբռ, Երևան, Մուղնի հրատ.:

Սմբատեանց 1895 - Սմբատեանց Մ. արք., Տեղագիր Գեղարքունի ծովագարդ գաւառի որ այժմ Նոր Բայազիտ գաւառ, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի:

Սմբատեանց 1896 - Սմբատեանց Մ. արք., Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից որք ՚ի Շամախույ թեմի, Տփլիս, տպարան Մովսէս Վարդանեանցի:

Տէր-Մկրտչեան 1914 - Տէր-Մկրտչեան Կ., Դօփեանք եւ Մելիք Շահնագարեանք, Նիւթեր հայ մելիքութեան մասին, Ս. Էջմիածին, Ելեքտրաշարժ Տպ. Մայր Աթոռոյ:

Տէր Յովհանեանց 1880 - Տէր Յովհանեանց Յ., Պատմություն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. Ա, Նոր Ջուղա, տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց:

Տէր Յովհաննիսեանց 1880 - Տէր Յովհաննիսեանց Գ., Բադտասար Մետրապօլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն, Փորձ, Տփլիս, 1880, հ. 5, էջ 131-164:

Բաֆֆի 1964 - Բաֆֆի, Խամսայի մելիքություններ, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, Հայպետհրատ, էջ 161-383:

Փափազյան 1956 - Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

Փափազյան 1959 - Փափազյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ Բ, Երևան, պրակ Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:

- Փափազյան 1962** - Փափազյան Հ., Երկու նորահայտ իլխանական յառլիղներ, Բանբեր Մատենադարանի, հ. 6, Երևան, 1962, էջ 379-401:
- Փափազյան 1968** - Փափազյան Հ. 1968, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվաժագրեր, պրակ Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
- Փափազյան 1973** – Փափազյան Հ., Ջրատիրության մասին դիվանական վավերագրերը և շահ Սաֆիի 1638 թ. հրովարտակը, Բանբեր Մատենադարանի, հ. 11, 1973, էջ 223-232 :
- Փափազյան 1978** - Փափազյան Հ., Ռաշիդ-Էդ-Դինը Կիլիկյան Հայաստանի մասին, ՊԲՀ, հ. 2 (81), էջ 129-139 :
- Փափազյան 2020** – Փափազյան Հ., Հոդվածներ, Երևան, «Անտարես» հրատ.:
- Փափազյան 1990** - Փափազյան Վ., Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ.:
- Иванов 1954** – Иванов П., Хозяйство Джуйбарских шейхов, Москва-Ленинград, изд. АН СССР.
- Мукминова 1966** – Мукминова Р., К истории аграрных отношений в Узбекистане XVI в. по материалам “Вакф-наме”, Ташкент, изд. “Наука”
- Սափյան 1972** - Սափյան Ա., Ագրարные отношения в Восточной Армении в XVI- XVII веках, Ереван, изд. АН АрмССР.
- Петрушевский 1949** - Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, изд. Ленинградского гос. Университета им. А. А. Жданова.
- Ростопчин 1937** - Ростопчин Ф., Указы Кубинских ханов, кн. III, Тбилиси, изд. Груз. Фил. АН ССР.
- Смирнов, Гаибов 1936** – Смирнов К. Н., Гаибов Дж., Передняя Азия в документах (Нахичеванские рукописные документы XVII-XIX вв.), кн. I, Тифлис изд. Груз. Фил. АН СССР.
- Тбилисская коллекция персидских фирманов 1989**, т. II, подг. М. Тодуа, Тбилиси, изд. Гл. арх. упр. при Сов. Мин. Гр. ССР.
- Тбилисская коллекция персидских фирманов 1995**, т. I, подг. М. Тодуа, Кутаиси, изд. Центр. гос. ист. архив Грузии.
- Хубов 1811** - Хубов Е., Описание достопамятныхъ произшествій въ Арменіи, СПб., тип. Иоаннесова.

- Чехович 1954** – Чехович О., Документы к истории аграрных отношений в Бухарском ханстве, Ташкент, изд. АН СССР.
- Busse 1959** - Busse H., Untersuchungen zum Islamischen Kanzleiwesen, Kairo, Kommissionsverlag Sirovic Bookshop.
- Fekete 1977** - Fekete L., Einführung in die Persische Paläographie, 101 Persische Dokumente, Budapest, Akademiai Kiado.
- Ghougassian 1998** – Ghougassian V., The Emergence of the Armenian Diocese of New Julfa, University of Pennsylvania, Scholars Press Atlanta, Georgia.
- Kostikyan 2017** - Kostikyan K., Catalogue of Persian Manuscripts in the Matenadaran, Yerevan, 2017, Nairi.
- Margaryan, Kostikyan, Tovmasyan 2021** – Margaryan G., Kostikyan K., A. Tovmasyan, Agulis on the Crossroads of International trade through Caucasus in XII-XVIII centuries, The History, Archeology and Ethnography of the Caucasus, volume 17, № 4 (2021), pp. 848-858.
- قایم مقامی ج.، 1350** مقدمه ای بر شناخت اسناد تاریخی، تهران، سلسله انتشارات انجمن آثار ملی.
- هاشمی ، ش.، 1394** ارامنه جلفای نو در عصر صفوی، تهران، سازمان اسناد و کتابخانه ملی جمهوری اسلامی ایران.